ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանի՝ 2020 թվականի հունվարի 15-ից 18-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը

Տիգրան Խաչատրյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետը

2020թ. հունվարի 15-ից 18-ը, ք. Բեռլին

4. Հրավիրող կողմը

Գերմանիայի Դաշնային Հանրապետության գյուղատնտեսության դաշնային նախարար Յուլիա Քլյոքներ

5. Գործուղման նպատակը, աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը

- Մասնակցություն «Սնունդ բոլորի համար. առևտուր՝ ապահով, բազմազան և կայուն սնուցման համար» խորագրով պարենի և գյուղատնտեսության գլոբալ ֆորումին, ինչպես նաև ֆորումի շրջանակներում կազմակերպվող գյուղատնտեսության նախարարների 12-րդ համաժողովին: Համաժողովին մասնակցել են 71 երկրների գյուղատնտեսության նախարարներ և 12 միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան պաշտոնյաներ: Համաժողովը նախագահում էր Գերմանիայի Դաշնային Հանրապետության գյուղատնտեսության դաշնային նախարար Յուլիա Քլյոքները:

- Մասնակցություն «Բեռլինյան կանաչ շաբաթ» գյուղատնտեսական միջազգային ամենամյա ցուցահանդեսի պաշտոնական բացման արարողությանը:

6. Քննարկված թեմաները

Պարենի և գյուղատնտեսության գլոբալ ֆորումի շրջանակներում անցկացվել են մեծ թվով միջոցառումներ, որոնք հանդիսանում են միջազգային հարթակ քաղաքական, գործարար, գիտական և քաղաքացիական հասարակության փորձագետների համար՝ հնարավորություն ընձեռելով անդրադառնալ և համաձայնության գալ գլոբալ գյուղատնտեսական քաղաքականությանը և պարենային ապահովությանն առնչվող հարցերի և մարտահրավերների շուրջ:

Պարենի և գյուղատնտեսության գլոբալ ֆորումի առանցքային թեման քննարկվել է ֆորումի պանելային հարթակներում ինչպես փորձագետների, այնպես էլ բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով:

«Առևտուրը՝ Կայուն զարգացման նպատակ 2-ին հասնելու գրավական» խորագրով բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով քննարկումն անցկացվեց Առևտրի համաշխարհային կազմակերպության և ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) համանախագահությամբ: Քննարկման ընթացքում մտքեր փոխանակվեցին պարենային անվտանգության, կլիմայի փոփոխության և թվային տեխնոլոգիաների բնագավառներում առևտրի դերի և փոխազդեցության վերաբերյալ:

«Ագրոպարենային առևտրի ներուժի զարգացում» խորագրով բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով քննարկումն անցկացվեց Եվրոպական հանձնաժողովի նախագահությամբ: Քննարկումներն ընթացան Կայուն զարգացման նպատակ 2-ի և 12-ի շրջանակներում: Քննարկման ընթացքում մտքեր փոխանակվեցին գյուղատնտեսական ապրանքների առևտրի, սննդամթերքի մատակարարման ցանցի բարելավման, գյուղատնտեսության զարգացման և ներդրումների խթանման շուրջ:

Գյուղատնտեսության նախարարների համաշխարհային ամենամեծ հանդիպում հանդիսացող գյուղատնտեսության նախարարների 12-րդ համաժողովի ընթացքում քննարկումներն ընթացան «Սնունդ բոլորի համար. առևտուր՝ ապահով, բազմազան և կայուն սնուցման համար» խորագրի ներքո: Համաժողովի ընթացքում ներկայացվեց նաև Պարենի և գյուղատնտեսության միջազգային թվային խորհրդի ստեղծման հայեցակարգի նախագիծը, որը մշակվել էր ՊԳԿ-ի կողմից գյուղատնտեսության նախարարների նախորդ՝ 11-րդ համաժողովի որոշմամբ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը

Գյուղատնտեսության նախարարների 12-րդ համաժողովի ընթացքում անցկացվեցին քննարկումներ չորս հիմնական ուղղություններով՝

- համաշխարհային պարենային անվտանգության համար առևտրի խթանումը,
- առևտուրը՝ գյուղատնտեսության զարգացման գրավական,
- պարենային արժեշղթաների ներառականությունը, կայունությունը և անվտանգությունը,
- գյուղատնտեսական ապրանքների արդար առևտուրը:

Համաժողովի ընթացքում քննարկվեց, թե ինչպես պարենային և գյուղատնտեսական ապրանքների առևտուրը կարող է նպաստել պարենային անվտանգության ապահովմանը աշխարհի աճող բնակչության համար, սնուցման և մարդու առողջության բարելավմանը, ֆերմերների կենսապահովման և եկամտի բարձրացմանը և առավել կայուն պարենային համակարգերի ստեղծմանը:

Ընդգծվեց բավարար քանակությամբ անվտանգ, սննդարար և մատչելի սննդամթերք արտադրելու անհրաժեշտությունը՝ սննդամթերքի կորուստները նվազեցնելուն զուգահեռ, ինչը թույլ կտա կայուն պայքար ծավալել աշխարհում սովն ու թերսնումը վերացնելու ուղղությամբ: Այս առումով համոզմունք հայտնվեց, որ գյուղատնտեսությունը կարող է մեծ ներդրում ունենալ նշված խնդիրների լուծման համար:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի արդյունքում գյուղատնտեսության նախարարների կողմից ընդունվել է համատեղ կոմյունիկե՝ նպատակ ունենալով խթանել գյուղատնտեսական և պարենային ապրանքների առևտրի դերը կայուն գյուղատնտեսությունն ու պարենային համակարգերը ապահովելու գործում՝ երաշխավորելու համաշխարհային պարենային անվտանգությունը, թերսնման կանխումը և ներառական զարգացումը: Կոմյունիկեով սահմանվել է, որ առևտրի քաղաքականությունը՝ որպես ինտեգրված և համապարփակ ռազմավարության մաս, պետք է ծառայի գյուղատնտեսության և պարենային համակարգերի կայունության բարելավմանը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվել է համաժողովի մասնակից երկրներում անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել կոմյունիկեով առաջարկված գործողություններն ազգային մակարդակներում իրագործման ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

20.01.2020.